# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության գյուղատնտեսության և հողաբարելավման նախարարության միջև գյուղատնտեսության բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը և Եգիպտոսի Արաբական Հանրապետության գյուղատնեսության և հողաբարելավման նախարարությունը, այսուհետև՝ Պայմանավորվող կողմեր,

ցանկանալով իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարության միջև տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության մասին Համաձայնագիրը՝ ստորագրված Կահիրեում 1992 թվականի մայիսի 27-ին,

ձգտելով աջակցել և զարգացնել տնտեսական և գիտատեխնիկական համագործակցությունը գյուղատնտեսության բնագավառում,

նկատի ունենալով, որ նման համագործակցության զարգացումը և ամրապնդումը փոխշահավետ է երկու երկրների համար,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

## Հոդված 1

Պայմանավորվող կողմերը կաջակցեն երկու երկրների միջև գյուղատնտեսության բնագավառում համագործակցությանը, որը կներառի հետևյալ ոլորտները.

- բուսաբուծություն,
- անասնաբուծություն,
- գյուղատնտեսական մթերքների հետբերքահավաքային մշակում,
- գյուղատնտեսական արտադրանքի պահպանման տեխնոլոգիաներ,
- սննդի վերամշակման արտադրություն,
- գյուղատնտեսական և պարենային ապրանքների մարկետինգ,
- գյուղատնտեսական ոլորտում հետազոտական աշխատանքներ,
- բույսերի սանիտարական հսկողություն,
- անասնաբուժական ծառայություններ,
- հողատարածքների բարելավում,
- ոռոգման համակարգեր:

## Հոդված 2

Գյուղատնտեսության բնագավառում համագործակցությունը կիրականացվի հետևյալ ուղղություններով.

ա) գիտական, մարկետինգային, տեխնիկական տեղեկության և փաստաթղթերի փոխանակում,

բ) գենետիկական և կենսաբանական նյութերի փոխանակում,

գ) գիտական հետազոտությունների բնագավառում զարգացման մասին տեղեկության փոխանակում,

դ) փորձագետների և խորհրդատուների փոխադարձ այցելություններ,

ե) երկու երկրների ուսումնական ծրագրերի, սեմինարների, կոնֆերանսների և ժողովների կազմակերպում,

զ) արտադրության և մարկետինգի համակարգերի բարելավմանն ուղղված եռակողմ համագործակցություն (այլ երկրների և/կամ միջազգային կազմակերպությունների հետ) տնտեսական բարեփոխումների աջակցության, ռեգիոնալ ծրագրերի զարգացման և իրականացման նպատակով,

է) երկու երկրների կոոպերատիվ և մասնավոր սեկտորների միջև համատեղ ձեռնարկությունների ստեղծման խրախուսում՝ ներառյալ արտադրության, մարկետինգի և արտաքին առևտրի բնագավառները:

## Հոդված 3

Պայմանավորվող կողմերը կստեղծեն գյուղատնտեսության բնագավառում համագործակցության Համատեղ հանձնաժողով՝ կազմված երկու նախարարությունների ներկայացուցիչներից և հարմարության դեպքում նաև կոոպերատիվ և մասնավոր ձեռնարկությունների պատվիրակներից:

Գյուղատնտեսության բնագավառում համագործակցության Համատեղ հանձնաժողովի նիստերը հաջորդաբար կգումարվեն Երևանում և Կահիրեում: Նիստերի ժամկետները կճշտվեն դիվանագիտական ուղիներով:

## Հոդված 4

Հանձնաժողովը կընդունի սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված բնագավառների հետագա համագործակցությունը զարգացնելու նպատակով հանձնարարականներ և առաջարկություններ:

## Հոդված 5

Սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածով նախատեսված փորձագետների և խորհրդատուների փոխադարձ այցելությունների ընթացքում ուղարկող Կողմը հոգում է ճանապարհածախսը:

Ընդունող Կողմը այցելությունների ընթացքում հոգում է ներպետական փոխադրումների, կեցության և օրապահիկի ծախսերը:

## Հոդված 6

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Պայմանավորվող կողմերի՝ սույն Համաձայնագրի համապատասխան իրենց ներպետական իրավական ընթացակարգերն ավարտվելու մասին միմյանց վերջին ծանուցման օրը:

Սույն Համաձայնագիրը կգործի 5 տարի ժամկետով և ինքնաբերաբար կերկարացվի ևս հինգ տարով, եթե Պայմանավորվող կողմերից որևէ մեկը սույն Համաձայնագրի ժամկետը լրանալուց առնվազն վեց ամիս առաջ մյուս Պայմանավորվող կողմին դիվանագիտական ուղիներով գրավոր չծանուցի այն դադարեցնելու իր մտադրության մասին:

## Հոդված 7

Պայմանավորվող կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են փոխել սույն Համաձայնագիրը: Սույն Համաձայնագրի ցանկացած փոփոխություն ու լրացում ուժի մեջ կմտնի դրա համար սահմանված կարգով:

Կատարված է Կահիրե քաղաքում 1997 թվականի ապրիլի 10-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, արաբերեն և անգլերեն, բոլոր տեքստերը հավասարազոր են: Տեքստերում մեկնաբանման տարբերությունների դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1997 թվականի հուլիսի 12-ից: